

ՀԱՅՈՅ ԼՈՅՍԻ ՓԱՐՈՍ

Վեն, պաշտօնական սուրբն ոսկեզոծ
Պաշտան դրեցիր արտոլ ալեկոծ ...
Փոխեցիր պալատն պերն, արքայական,
Ու սիրով մսար խոցը վանական:

Հաննարեդ շուքով Հայոց աշխարհում,
Երեսան եկար հինգերորդ դարում,
Գլխատը աստղի հրավառ լոյսով
Փայլեցրիր Հայկեան լեզուն տառերով:

Հիմնադիր եղար Հայ դպրոցներին,
Ու փարոս անեւ՝ գիտականներին,
Որոնք ճանեցին անուն պատուական,
Ու վառ պանեցին լոյսիդ վառարանն:

Վարար գետի պէս տառնալեց դարերից
Քո զործն է հոսում Հայոց գրիչից,
Ու քո հնարած անմահ տառերով,
Գոհար է բխում գոհար բառերով:

Դու յաւերժացրիր Հայկական լեզուն,
Ինչպէս վառ աստղի ցոլք շողողուն,
Զբոլիւր ձուլուենք, յաւերժ վերջանանք,
Ու լոկ պատմական յուշերում մնանք:

Սուրբ Մեսրոպն ես դու, մտքով արաքեւ,
Որ ընդգրկեցիր պայքարն յարաքեւ,
Ու զգար Հայոց հոխ, բազմահնչիւն
Տառերն ոսկեայ, տառերն գեղազոյն:

Մ. Դ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Կովկաս, 2 Հոկտ. 1961

